

է և կարելի է օգտվել, իմաստավոր և գեղեցիկ ասացվածքներ, սճեր և առանձին բառեր բնութային, խիստ ձախակի և նրբանկատությամբ, բայց բարբառի այնպիսի չափերի և բնույթի օգտագործում, որ տեսնում ենք օրինակ՝ ընկեր Դաշտենցի «Խոզեզան» վեպում — խիստ դատապարտելի է, «Ես աղա Մհեր, մկա ծիծեռնակ կծրտի քու բերան», — ասում է Դաշտենցի հերոսներից մեկը, Երեակայեք, որ Անուշն ու Սարոն (որոնք նմանապես գյուղացիներ են) իրար հետ խոսելին նման լեզվով ու սճով, ինչ կմնար Թումանյանի անմահ պսեմի գեղարվեստական հմայքից, Բարբառների օգտագործման հարցի կապակցությամբ շատ ընկերներ արտահայտվեցին այսպես կոչված արևելահայերենի և արևմտահայերենի մասին, Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ մի ազգ չի կարող ունենալ երկու լեզու։ հետևաբար սխալվում են այն լեզվաբանները, երբ գտնում են, որ մենք երկու ազգային գրական լեզու ենք ունեցել։ Այս հարցը ՀԿ(Բ)Պ 15-րդ համագումարում միանգամայն ճիշտ արժարժեց ընկեր Ջավեն Դրիգորյանը։

Հայոց լեզուն սովետական շրջանում շատ է հարստացել։ Մեր գրողների խնդիրն է ամբողջությամբ օրիտպետել այդ հարստությունը և անգուց կերպով աշխատել մեր լեզվի մաքրությունը վրա։

ԸՆԿ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկերներ, հայոց լեզվի մաքրության և ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հարցերը ունեն չափազանց կարևոր նշանակություն։ Առանձնահատուկ կարևորություն ունի ընկեր Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ՝ հայոց լեզվի մաքրության և հայերենի լեզվաշինարարության թեորիական սկզբունքների ճիշտ մշակումը, առանց որի հնարավոր չէ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի թարգմանությունների ճիշտ կազմակերպումը։ Թարգմանական գրականությունը և առանձնապես մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերը, որոնք տարածվում են տասնյակ հազար օրինակներով և դարձել են սեղանի գիրք, հսկայական ազդեցություն ունեն մեր լեզվի զարգացման վրա, հարստացնում են այն։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները մեր աշխատավորությանը տալիս են ոչ միայն իդեական գանձեր, այլև լեզվական գանձեր։ Ուստի մարքսիզմի կլասիկների երկերի թարգմանությունը հայերենի՝ լեզվաշինարարության կարևորագույն գործոններից մեկն է և զրա համապատասխան այն պետք է արժանանա լեզվաբանության ուղղորդությունը։ Մինչդեռ պետք է ասել, որ մեր լեզվաբանները թարգմանության պրոբլեմներից հեռու են կանգնում, դործի ամբողջ ծանրությունը թողնելով պրակտիկների՝ թարգմանիչների և հրատարակիչների վրա։ Ոչ մի թարգմանություն չի կարող կատարվել լինել, եթե նա չի հենվում լեզվաշինարարության թեորիական ճիշտ բաղադրի վրա։ Դժբախտաբար մենք չենք կարող ասել, որ այդ բաղադրանքան ամուր էր, որ ուղղություն տար մեր թարգմանիչներին ու հրատարակիչներին։ Մենք փորձել ենք այդ աշխատանքում ներգրավել լեզվաբաններից ոմանց, բայց դա սխառմատիկ բնույթ չի կրել։ Ես կարծում եմ, որ մեր այս խորհրդակցության արդյունքներից մեկն էլ այն պիտի

լինի, որպեսզի սերտ կապ ստեղծվի աշուհակալական լեզվաբանների և թարգմանական գործի կազմակերպիչների միջև:

Պետք է նշել, որ թարգմանական սկզբունքների մասին դոկտրինան էն ունեցել մի շարք թյուր և սխալ կարծիքներ, որոնք շարունակում են գեո գոյություն ունենալ և խանգարել այդ գործի կազմակերպմանը:

Մտոի և նրա աշակերտների ոչ-մարքսիստական գրությունները քիչ լինաւ չեն հասցրել նաև այս բնագավառին: Նրանց այն տեսակետը, թե լեզուն վերնաշենքային երևույթ է, դասակարգային է, ճշորձ լեզու ստեղծելու նրանց տենդենցը, արհամարհական և նիհիլիստական վերաբերմունքը դեպի քերականությունը,—այս ամենն առաջ էին բերում խառնաշփոթություն լեզվի մեջ, հնարավորություն էին ստեղծում խախտելու լեզվի ամեն մի նորմա և ասպարեզ տալու անդրադարձությունը: Իրանք ճանապարհ էին բաց անում ամեն տեսակ կամայականությունների համար. յուրաքանչյուր թարգմանիչ, խմբագիր կարող էր առանց որևէ պատասխանատվության զգացմունքի իր հնարած կամ արտասահմանյան լեզուներից փոխառած բառերը, ձևերը մտցնել դրական լեզվի մեջ: Եվ իսկապես, եթե մենք թերթենք մի շարք թարգմանական երկեր, ապա կգտնենք այնպիսի հորինված բառեր, տերմիններ, որոնք համաժողովրդական չեն և բնավ չեն ընկալում մասսաները:

Մյուս կողմից հանդես էին գալիս «հակադարձ» տրամադրություններ, որոնք նույնչափ ֆեոստակար էին և հանգստեցնում էին բուրժուական նաղիսնալիզմին,—թե իբր հարկավոր է ամուր պատենշավորել մեր լեզուն, թույլ չտալ նրա մեջ որևէ փոխառություն, մասնավորապես ոոսերեն լեզվից, վերականգնել արխայիկ բառերն ու ոճերը, մեծ մասամբ օգտագործելով զրարարը:

Պետք է ասել, որ այդ երկու ֆեոստակար տեսակետներն էլ, որոնք իհարկե հակահարված ստանում էին, իրենց ազդեցությունը որոշ չափով թողել են մեր թարգմանական գրականության վրա:

Այժմ մեր խնդիրն է, մաքրել լեզուն նրա համար խորթ և ֆեոստակար տարրերից և ընկեր Ստալինի ուսմունքով գինված առաջ տանել մեր լեզվի դարդաղման աշխատանքը: Հայաստանի Կ(Բ)Պարտիայի 15-րդ համագումարում ընկ. Հարությունյանը ուղղակի ցուցում տվեց՝ հատուկ ուշադրություն դարձնել լեզվի մաքրությանն ու պահպանմանը:

Այդ խնդրի կատարումը պահանջում է ճիշտ լուծել մեր լեզվի պատմությունը, ինչպես նաև ներկայիս լեզվաշինարարության արմատական հարցերը—գրարարի. պոլսահայ բարբառի, հայ բարբառների, փոխառությունների և այլ հարցերը: Իսկոր դեպքերում մեզ համար կալիկա պետք է հանդիսանա լեզվի ստալինյան ուսմունքը: Բնչ է լեզուն, որոնք են նրա հատկանիշները, որն է նրա հասարակական ֆունկցիան,—այս հարցերի հանճարեղ լուսարանումը տվեց ընկեր Ստալինը:

Ընկեր Ստալինը ուսուցանում է, որ լեզուն վերնաշենքային երևույթ չէ, այլ ստեղծված է և գոյություն ունի՝

«Որպեսզի ծառայի հասարակության՝ իբրև ամբողջություն, որպես մարդկանց հաղորդակցման գործիք, որպեսզի ընդհանուր լինի հասարակության անդամների համար և միաժամանակ՝ հասարակության համար, որպեսզի հավասարապես սպասարկի հասարակության անդամներին, անկախ

նրանց դասակարգային զրույթյունից: Բավական է, որ լեզուն չեզոքի այդ համաժողովրդական զիրքից, բավական է, որ լեզուն կանգնի որևէ սոցիալական խմբի զերազատման ու աջակցման զիրքի վրա՝ ի վնաս հասարակության մյուս սոցիալական խմբերի, որպեսզի նա կորցնի իր որակը, զաղարի հասարակության մեջ մարդկանց հաղորդակցման միջոց լինելուց, որպեսզի նա վերածվի որևէ սոցիալական խմբի ժարպոնի, հետադիմի և իրեն դատապարտի անհետացման:

Այնուհետև ընկեր Ստալինը ասում է.

«Լեզուն միջոց, գործիք է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են իրար հետ, փոխանակում մաքերը և հասնում փոխադարձ ըմբռնման: Անմիջականորեն կապված լինելով մտածողության հետ, լեզուն բառերի մեջ և բառերի միակցությամբ նախադասությունների մեջ պրանցում ու ամրապնդում է մտածողության աշխատանքի արդյունքները, մարդու իմացական աշխատանքի հանգույցները և, այդպիսով, հնարավոր է դարձնում մտքերի փոխանակությունը մարդկային հասարակության մեջ»:

Լեզվի հասարակական դերի և նշանակության մասին ընկեր Ստալինի այս խորիմաստ գրույթը պետք է կազմի հայոց լեզվի մաքրության հարցադրման հիմքը: Հայոց լեզվի մաքրություն ասելով, ես կարծում եմ, պետք է այդ հարցը հասկանանք այնպես, որ մաքրենք մեր լեզուն այն բառերից, տերմիններից, արտահայտչական ձևերից, որոնք խոչընդոտ են հանդիսանում մարդկանց փոխադարձ ըմբռնմանը, նրանց սոցիալիստական աշխարհայացքի, կուլտուրայի, կրթության զարգացմանը:

Այս տեսակետից, իհարկե, անընդունելի պետք է համարել պարբերի, բարբառների կամ արևմտահայ գրական լեզվի գործածությունը: Երբ ասում ենք, չպետք է օգտագործել պարբարը, բարբառները, խոսքը չի վերաբերում այն առանձին բառերին, արտահայտչական ձևերին, որոնք գործածվում են հատուկ անհրաժեշտությամբ: Երեկ ընկ. Փոթեյանը բերեց օրինակներ, ինչպես ճակն ընդ ականձ, ճառյն բարբառո հանապատիժ և այլն. նմանապես խոսքը չի վերաբերում այն բառերին, որոնք պարբարում գործածվել են և այժմ էլ մտել են մեր լեզվի հիմնական ֆոնդի մեջ: Խոսքը վերաբերում է արխայիկ, ժողովրդի համար անըմբռնելի, անհասկանալի, մեր ներկայիս մտածողությանը բոլորովին խորթ բառերին և արտահայտություններին:

Ես կարծում եմ, որ պրոֆ. Ղափանյանի թիզերը զրաբարի և Պոլսի բարբառի մասին՝ համոզիչ էին: Պետք է ընդունել, որ զրաբարը իր ժամանակին եղել է խոսակցական լեզու, որը, սակայն, ժամանակի ընթացքում փոփոխվել է, զարգացել և աստիճանաբար նոր որակ է ստացել, մինչդեռ որպես սրբավոր լեզու, պաշտոնական լեզու նա փնացել է հիմնականում նույն վիճակում, ինչ 5-րդ դարում էր: Այդ մասին իր ժամանակին Մ. Նալբանդյանը նույնպես նշել է:

«Նոր լեզվի մշակությունը, — պրեկ է Նալբանդյանը, — չի կարելի առաջ տանել, ստրկանալով հին լեզվի ոգուն կամ ազդեցության, որովհետև նոր լեզվով խոսող հայերը ընկած են ուրիշ պատմական և բնական ազդեցությունների տակ, քան թե այն հայերը, որ երբեմն խոսել են հին լեզվով»:

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 17:

² Նույն աեղում, էջ 49-50:

Գրական լեզվի հարցում, որի մասին խոսեց նաև ընկ. Զ. Դրիզորյանը (Բ)՝ 15-րդ համադումարում, պետք է ընդունել իմ կարծիքով այն թեզը, որ մենք ունենք մեկ հայերեն, համաժողովրդական լեզու, արարատյան բարրառների բազայի վրա կազմակերպված մեր արդի աշխարհարարը, որը պետք է ընդհանուր լինի և՛ արևելյան և՛ արևմտյան հայերի համար։ Դադարձիք չէ, որ արևելաօտայ գրականությունը, մասնավոր նույնքան տարածված և մատչելի է եղել Արևմտյան Հայաստանի բոլոր բնակչության մեջ, որքան պոլսաօտայ գրականությունը։ Այդ մասին ճիշտ կերպով նշել է նաև Վ. Տերյանը։ Պոլսաօտայ բարբառը չդարձավ համաժողովրդական գրական լեզու և չէր էլ կարող դառնալ։ Բնի այժմ առավել ևս նա չունի ոչ մի նեոանկար։ Որոշ ընկերներ, որոնք հակված են այն տեսակետին, թե Պոլսի բարբառը բարբառ չէ, այլ հայերենի երկրորդ գրական լեզուն, փորձում են, որպես փաստարկ առաջ քաշել արևմտաօտայ գրականությունը։ Չէ՞ որ այդ լեզվով են գրել, — ասում են նրանք, — Պարոնյանը, Դուրյանը, Զոհրապը և այլն։ Դա ինչ թվում է յուրջ փաստարկ չէ։ Արտվյանը «Վերքը» գրել է Քանաքեռի բարբառով, Սունդուկյանն իր պիեսները գրել է Թիֆլիսի բարբառով, Սալաթ-Նովան նույնպես՝ Թիֆլիսի բարբառով, բայց ում մտքից կանցնի այդ պատճառով նսեմացնել նրանց խոշորագույն արժեքը։

Ես ուզում եմ հստակ առնել մեր թարգմանության պրակտիկ հարցերի վրա։ Թարգմանությունը խոշոր ազդակ է լեզվի զարգացման գործում։ Ի՞նչ սկզբունքներով պետք է առաջ գնա այդ զարգացումը, հարստացումը, սա կարևոր հարց է։

Սոսևով հայոց լեզվի զարգացման, հարստացման մասին, մենք զարձալ պետք է ելնենք ընկեր Ստալինի հանճարեղ ցուցումներին։ Ընկեր Ստալինը մարքսիզմի պատմության մեջ առաջինը ցույց տվեց լեզուների զարգացման պայմանները և նշեց ապագա միասնական լեզվի ստեղծման նախադրյալները։ Ընկեր Ստալինը բազմիցս նշել է, որ ապագա համաշխարհային միասնական լեզվի ստեղծումը բնավ չի հակասում մեր պարտիայի քաղաքականությանը՝ սովետական ժողովուրդների ազգային կուլտուրաների ու լեզուների ըստ ամենայնի զարգացման մասին։

Ենթերիվ բուլղարիկների պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությանը՝ հայ ժողովրդի ազգային կուլտուրան, նրա լեզուն այս ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընթացքում աննախընթաց զարգացում ապրեցին։ Մեր լեզուն, ինչպես և մի շարք ուրիշ լեզուներ, զարգացավ շուրջ թե գոյություն ունեցող լեզվի ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծավալման ու կատարելագործման միջոցով։¹

Մեր լեզվի մեջ բառային հիմնական ֆոնդի հիմքի վրա կազմվեցին բաղաձայնի նոր բառեր, որոնք հարստացրին հայ լեզվի բառային կազմը։ Սրինակ, հարվածային, հնգամյակ, ինքնաթիռ, գերազանցիկ, ակաճանետ, ականաձիգ և այլն։ Այսպիսով՝ մեր լեզվի հարստացման

¹ Բ. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանություն հարցերը, էջ 80։

հիմքը. նրա բառային հիմնական ֆոնդն էլ մեր լեզուն այսուհետև էլ ունի բոլոր հնարավորությունները՝ զարգանալու հիմնականում իր սեփական բազայի վրա: Հայ լեզվի բառային կազմը հարստացավ նաև բազմաթիվ փոխառված բառերով, որոնք մասնաձևի են ժողովրդին և դարձել են գործածական:

Հայ լեզվի զարգացման վրա իր բարերար ազդեցությունն է ունեցել և այսուհետև էլ կունենա ուսումնական ժողովրդի մեծ, հոյակապ լեզուն: Հայոց լեզվի մաքրությունն ասելով չպետք է հասկանալ այն, որ մենք լեզուն պատենալորենք սոցիալիստական ազգերի և առաջին հերթին ուսումնական ազգի լեզվից: Ընդհակառակը, ինչպես ասացինք, ուսումնական լեզուն անչափ հարստացրեց և բազմակողմանի դարձրեց մեր լեզուն:

Ազգային լեզուն պատենալորելու ամեն մի փորձ բուրժուական նացիոնալիստական ձգտում է և կարող է հասցնել միայն լեզվի ամլացմանը: Մեր լեզուն եթե չունենար փոխառություն ընդունակություն, եթե նա չընկերներ ուսումնական լեզվից բազմաթիվ գանձեր, նա մի մեռած լեզու կմնար: Փոխառությունը միանգամայն բնական պրոցես է և պրոգրեսիվ երևույթ:

Բայց այդ չի նշանակում իհարկե, որ պետք է հայերենում չեղած բառերը ուրիշ լեզուներից մեխանիկորեն տեղափոխել մեր լեզվի մեջ, ինչպես այդ երբեմն անում են որոշ մարդիկ առանց իրենց նեղություն պատճառելու, փնտրելու և գտնելու համապատասխան հայերեն: Դա թույլ դիմադրության ճանապարհով ընթանալ է: Փոխառություններ կատարելիս պետք է հաշվի առնել թե որքանով փոխառած բառը անփոխարինելի է, որքանով հանրամատչելի է, որքանով համապատասխանում է մեր լեզվի ներքին կանոններին:

Փոխառությունների հարցում ես համաձայն եմ ընկ. Ղափանցյանի թեզերին: Ժիշտ չեմ համարում որոշ ընկերների կարծիքը, թե պետք է վերականգնել մեր լեզվում հեղափոխություն, խորհրդային բառերը: Ես կարծում եմ, որ այժմ վերադառնալ նորից հին գործածված տերմիններին՝ խորհուրդ, հեղափոխություն և այլն, ճիշտ չէ: Այդ բառերի ներմուծումը մեր լեզվի մեջ, մեր լեզուն չաղքատացրին և չխախտեցին նրա հիմքերը, ընդհակառակը այդ բառերը մեր լեզուն միայն հարստացրին: Մենք գործածում ենք էվոլուցիա բառը, ինչու չգործածենք նաև ուտոպիա:

Եվ վերջապես ուտոպիան ինչու է խախտում մեր լեզվի օրենքները: Ո՛չ մի բանով: Միանգամայն ընդունված, տարածված բառ է, և եթե փորձենք այդ բառը հանել, ժողովուրդը միանույն է կշարունակի ուտոպիա ասել:

Վերցնենք սովետ բառը: Երբ մեզ մոտ սովետական իշխանություն հաստատվեց, բոլորը ասում էին սովետական իշխանություն, այդպես են գրվել նաև առաջին դեկրետները: Ամբողջ աշխարհը սովետական է ասում, սովետական գրում: Ինչու համար մենք պետք է այլ կերպ գործածենք այդ բառը, ինչ նկատահույսներով. նույնը պետք է ասել պարտիա, ռեսպուբլիկա և այլ բառերի մասին: Ինչու չեն առաջարկում, օրինակ, հանել բլավ-լազյոգ բառը, որը հայերեն չի:

Ես կարծում եմ, որ այժմ այդ հարցը չպետք է դրվի: Այդ կարող է միայն և միայն փաստ հասցնել, եթե մենք այժմ նորից վերականգնենք

այդ բառերը, նրանք կարող են տերմինների մեջ խառնաշփոթություն ստեղծել:

Միթե մենք չունենք ֆեոդալիզմ, լիբերալ, մինիմում, լոգունգ և այլ հարյուրավոր նման բառերի հայերեն համարժեքները, բայց ինչու ոչ ոք հարց չի բարձրացնում, որ լոգունգ չգործածենք, այլ նշանաբան, ֆեոդալիզմ չստենք, այլ ավատական և այլն:

Ասում են չի կարելի դեկրետավորել: Այո, ճիշտ է լեզուն չի կարելի դեկրետավորել, բայց գիտակցորեն մշակել լեզուն, բարձրացնել սովորական, խոսակցական լեզուն դրական, լավ մշակված լեզվի աստիճանին, պետք է և անհրաժեշտ է: Այլ պարագայում հապա ի՞նչ դեր պետք է կատարի Տերմինարանական Կոմիտեն, եթե նա չպետք է մշակի որոշ լեզվական կանոններ և պարտադիր դարձնի բոլորի համար:

Այստեղ բնկ. Ս. Ղազարյանը առաջարկեց մի միջին գիծ — Թողնել գործածություն մեջ և՛ հին տերմինները և՛ նորերը, և՛ ռեզիուցիա և՛ հեղափոխություն: Ես կարծում եմ, որ դա անընդունելի պետք է համարել, որովհետև այն առաջ կբերի տերմինոլոգիայի խառնաշփոթություն: Մենք պետք է ձգտենք տերմինոլոգիայի ունիֆիկացման և ոչ թե բազմազանություն:

Տերմինների բազմատեսակ գործածությունը մեծ դժվարություններ է ստեղծում և դրա տխուր օրինակները մենք կյանքում հանդիպում ենք: Վերջիններ *станок* տերմինը: Գործածվում է և՛ դազգահ և՛ հաստոց: Եվ ահա Երևանի Ձերթինսկու անվան *Станкостроительный* գործարանի դրոշակի վրա գրված է «Հաստոցաշինական գործարանի կոլեկտիվ», իսկ նույն գործարանի գրադրություններում և մամուլում գրում են «Դազգահաշինական գործարան»: Գործարանի բանվորները հիմա չգիտեն թե ի՞նչ անուն տան իրենց գործարանին «հաստոցաշինական», «դազգահաշինական», թե ուղղակի ասեն «ստանկոստրաիտելնիյ», որը հայերեն չի:

Մենք ունենք «հաստոցավոր գնդացիր» (*станковый пулемет*), որը ընդունվել է լեզվի մեջ, էլ ինչ կարիք կար *станок*-հաստոցը վերացնել և անցնել *станок*-դազգահին, որը ճիշտ էլ չի, որովհետև դազգահը իրականում *верстак*-ն է:

Պետք է ասել, որ տերմինների այս խառնաշփոթությունը շատ անգամ գալիս է բառարաններից: Օրինակ նույն *станок* տերմինի դիմաց ուս-հայերեն բառարանում գրված են և՛ «հաստոցը» և՛ «դազգահը», *верстак*-ի դիմաց նույնպես գրված է՝ «դազգահ»:

Այս կապակցությամբ ես առաջ եմ քաշում բառարանների հարցը, հին բառարանները, չնայած իրենց արժանիքներին և խաղացած դրական դերին, ունեն նաև բազմաթիվ սխալներ և մեզ ոչ մի կերպ այժմ չեն բավարարում:

Մեր լեզվի մեջ մտած շատ անընդունելի բառեր ու ձևեր երբեմն գալիս են բառարաններից, նրանց ոչ ճիշտ սկզբունքով կազմված լինելու հետևանքով:

Ռուս-հայերեն բառարանը լիքն է մեռած, չօգտագործվող և շինծու, թիւած բառերով: Շատ հաճախ կհանդիպեք ուսերեն մեկ տերմինի դիմաց,

հայերեն մի քանի «հոմանիշներ»։ Տերմինը չի կարելի հոմանիշներով տալ։
 Զի կարելի aggregat-ի դիմաց հայերեն տալ և «սպարեղատ» և «միացք»
 (մի թխած բառ)։ դա խառնաշփոթություն է ստեղծում։

Այդ բառարաններում կդառնա ալիսի բառեր.

талон — հատկացագրի կոճղիկ

торф — հողածուխ

рояль — թեղաշնակ

симуляция — կեղծակերպում և այլն։

Երբ մենք խմբագրում էինք Վ. Ի. Լենինի երկերի 21-րդ հատորի հայերեն թարգմանությունը, հանդիպեցինք ալիսի նախադասություն.

«Արդի բուրժուազիայի փորձերին դիտակից բանվորները կպատասխանեն նորանոր, կրկնվող և երկրորդվող փորձերով»։ Դուրս է դալիս, որ երկրորդվող բառը դալիս է բառարանից, որովհետև այնտեղ ուսերեն повторный բառի դիմաց նշանակված է «կրկնվող» և «երկրորդվող» հայերեն թարգմանությունները։ Եվ ահա թարգմանիչը վերցրել է «երկրորդվող», թեպետ հայտնի է, որ ոչ ոք «երկրորդվող» չի գործածում։

Լենինի երկերի 25-րդ հատորում թարգմանված էր — «թղթագրումների արտարկումը»։ ով կհասկանա թե «արտարկում»-ը նշանակում է ВЫПУСК. Դարձյալ բառարանից է վերցված։ Ի՞նչ երաշխիք, որ վաղը որևէ թարգմանիչ повстанец բառը չի թարգմանի հայերեն «ստամբակ», քանի որ այդ ևս կա բառարանում.

Բառարանների հարցը չափազանց լուրջ հարց է և կենսական նշանակություն ունի մեզ համար։ Ընկեր Ստալինի հանձարեղ աշխատությունից հետո ահաբաժեղտ է վերանայել եղած բառարանները և կազմել ուսահայերեն լեզվի ալիսի բառարան, որը լիովին համապատասխանի մարքսիստական լեզվաբանության սկզբունքներին։

Շատ կարևոր են նաև ուղղագրության հարցերը։ Ես միանգամայն համաձայն եմ պրոֆ. Դափանցյանի առաջադրած սկզբունքին, որ պետք է գրել այնպես, ինչպես մենք հնչում ենք բառը։ Զի կարելի գրել պոպուլյար և հնչել պոպուլյար։

Մենք արտասանում ենք ուոլյուցիա, իսկ գրում ուոլուցիա. և ահա դրավորի ազդեցությամբ որոշ ընկերներ սկսել են այժմ արտասանել ուոլուցիա և նույնիսկ գրել ուոսերեն революция. Ինչպես տեսնում ենք, սխալ ուղղագրությունը ֆուսում է նաև ուոսերեն լեզվին տիրապետելուն։ Ճիշտ է նաև այն, որ պետք է գրել «Յապոնիա» և ոչ թե «Ճապոնիա» «եզվիտ» և ոչ թե «ճիզվիտ» և այլն։

Լեզվաշինարարության կարևորագույն հարցերը առաջ են քաշում նաև Տերմինաբանական Կոմիտեի վերակառուցման խնդիրը։ Տերմինաբանական Կոմիտեն մեծ դեր ունի կատարելու։ Այն բանից հետո, երբ ընկեր Ստալինը տվել է մարքսիստական լեզվաբանության հիմունքները, Տերմինաբանական Կոմիտեն հնարավորություն ունի ղեկելու և ճիշտ լուծելու հայերենի լեզվաշինարարության անհետաձգելի հարցերը։ Հարկավոր է, որ Տերմինաբանական Կոմիտեն կազմված լինի և՛ լեզվաբաններից և՛ պրակտիկներից, որ նա լայնորեն օգտագործի դիտություն և տնտեսության զանազան բնագավառի լավագույն մասնագետներին, այն ժամանակ նրա աշխատանքը կլինի արդյունավետ։